ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

իրավաբանական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր _____ Ս.Վ.Առաքելյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գրիգոր Արմենի Չոբանյանի «Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը միջազգային իրավունքի համատեքստում» վերտառությամբ ԺԲ. 00.06 (Միջազգային իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է արդի գլոբալացման պայմաններում պետությունների ինքնիշխանության, պետության տնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերի, մասնավորապես՝ բնական ռեսուրսների նկատմամբ, օտարերկրյա ներդրումների ոլորտում պետությունների ինքնիշխանության, մաքսային, ֆիսկալ և արժութային ինքնիշխանության, ինչպես նաև պետությունների ինքնիշխանության համատեքստում կրիպտոարժույթների ազդեցությանն առնչվող հիմնախնդիրներին:

Հեղինակը փորձել է մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը կարելի է համարել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ՀՀ-ում առկա արժեքավոր համապարփակ հետազոտություններից մեկը:

Ինքնիշխանության գաղափարը լայնորեն և բազմակողմանիորեն քննարկվել է տարբեր հեղինակների կողմից: Ինքնիշխանության հայեցակարգը յուրաքանչյուր անգամ վերաիմաստավորվել է պատմաքաղաքական որոշակի իրադարձությունների արդյունքում:

Գլոբալացման արդյունքում կատարված փոփոխություններն էական ազդեցություն են ունեցել պետությունների տնտեսական ինքնիշխանության վերաբերյալ առկա ավանդական պատկերացումների վրա: Համապատասխան մարտահրավերները վերափոխել են պետությունների տնտեսական ռազմավարության առաջնահերթությունները՝ առաջին պլան մղելով անվտանգ և ինքնուրույն տնտեսություն ստեղծելու խնդիրը: Մինչդեռ, ազգային տնտեսության կայուն զարգացումը ժամանակակից աշխարհում հնարավոր է միայն ինտեգրացիոն գործընթացներին համահունչ քաղաքականություն և միևնույն ժամանակ ինքնիշխան տնտեսություն ունենալու դեպքում:

Հիշատակված մարտահրավերների հաշվառմամբ՝ Հեղինակի կողմից աշխատանքի առանձին պարագրաֆներում քննարկվել են՝ պետությունների ինքնիշխանությունը բնական ռեսուրսների նկատմամբ, օտարերկրյա ներդրումների ոլորտում, մաքսային և հարկային ոլորտներում, հատուկ ուշադրության է արժանացել պետությունների արժութային ինքնիշխանությունը: Աշխատանքում համկողմանիորեն ներկայացվել են վերջին շրջանում բլոկչեյն տեխնոլոգիաների ներմուծման հետևանքով պետությունների ինքնիշխանությանը ապառնացող մարտահրավերները:

Շարադրվածը վկայում է Գ. Չոբանյանի ընտրած թեմայի արդիականության և հրատապության մասին:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել պետությունների տնտեսական ինքնիշխանությանն առնչվող խնդիրների բացահայտման, վերլուծության և լուծումներ գտնելուն ուղղված գիտական ավելի խոր ուսումնասիրությունների կատարման, իրավական կարգավորման հարցադրումների շրջանակի հստակեցման, դրանց հետագա զարգացման ուղիների նախանշման համար:

Տնտեսական ինքնիշխանության վրա ժամանակակից բլոկչեյն տեխնոլոգիաների և կրիպտոարժույթների ազդեցության ուսումնասիրությունը գործնականում

կարող է օգտակար լինել կիրպտոակտիվների միջոցով իրականացվող գործարքների ռիսկերը գնահատելու, ինչպես նաև դրանց չեզոքացմանն ուղղված իրավական ակտերի մշակման համար

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, դրանցում ներառված ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, թեմայի մշակվածության աստիճանը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը և մեթոդները, տեսական, նորմատիվ և էմպիրիկ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, կատարված ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլխում՝ «Պետությունների ինքնիշխանությունը գլոբալացման արդի պայմաններում» վերտառությամբ, հեղինակը ներկայացնում է պետությունների ինքնիշխանության էությունը և առանձնահատկությունները, պետությունների տնտեսական ինքնիշխանության հայեցակարգի էությունը:

Հիմնվելով կատարված ուսումնասիրության վրա՝ հեղինակը կատարում է մի շարք եզրակացություններ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

Տնտեսական ինքնիշխանությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, պայմանավորված չէ պետության սոցիալ-տնտեսական զարգացվածության աստիճանով: Տնտեսապես ինքնիշխան են բոլոր պետությունները:

Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը բովանդակում է հետևյալ հիմնական բաղադրատարրերը՝

- բնական ռեսուրսների նկատմամբ մշտական ինքնիշխանություն,
- օտարերկրյա ներդրումների կարգավորման ոլորտում ինքնիշխանություն,
- մաքսային ինքնիշխանություն,
- ֆիսկալ (հարկային), ինքնիշխանություն,
- արժութային ինքնիշխանություն:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Պետությունների տնտեսական ինքնիշխանության բաղադրատարրերը» վերտառությամբ, հեղինակն անդրադարձել է բնական ռեսուրսների նկատմամբ պետությունների մշտական ինքնիշխանությանը, պետությունների ինքնիշխանությանը օտարերկրյա ներդրումների ոլորտում, պետությունների ազգայնացման և սեփականացման իրավունքներին, ինչպես նաև պետությունների մաքսային ինքնիշխանությանը:

Սույն գլխում կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է մի շարք եզրակացությունների: Դրանցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները:

Սեփականազրկմանն առնչվող վեճերի դեպքում առավելապես խնդիրներ են առաջանում ենթադրյալ անուղղակի սեփականազրկման գործեր քննելիս, քանզի չկան միասնական ստանդարտներ, որոնցով կարելի է առաջնորդվել անուղղակի սեփականազրկում կատարելիս:

Պետության՝ սեփականազրկում իրականացնելու ինքնիշխանությունը սահմանափակող գործիքներից են կայունացնող դրույթները, որոնց իրավաբանական ուժի վերաբերյալ նույնպես չկա միասնական մոտեցում:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «Պետությունների ֆիսկալ և ֆինանսաարժութային ինքնիշխանությունը» վերտառությամբ, հեղինակը մանրամասն քննարկել է պետությունների ֆիսկալ ինքնիշխանությունը, արժութային ինքնիշխանությունը, կրիպտոարժույթների մարտահրավերները պետությունների ինքնիշխանության համատեքստում:

Տվյալ գլխում կատարված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է մի շարք եզրակացությունների: Դրանց շարքում կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները:

Ֆիսկալ ինքնիշխանությունը պետության տնտեսական ինքնիշխանության էական բաղադրատարրերից է, սակայն այն չի կրում բացարձակ բնույթ և անուղղակիորեն սահմանափակված է, մասնավորապես՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով, տվյալ դեպքում՝ սեփականության իրավունքով: Այդ իսկ պատճառով կրկնակի հարկման ոլորտում անձանց սեփականության

իրավունքը պաշտպանելու նպատակով միջազգային ունիվերսալ փաստաթղթերում հեղինակն առաջարկում է սահմանել կրկնակի հարկման առավելագույն շեմ:

«Հարկային դրախտներից» բացի՝ պետությունների ֆիսկալ ինքնիշխանության իրացման համար ժամանակակից աշխարհում էական խնդիրներ է առաջացնում թվային և վիրտուալ գործարքների միջազգային հարկումը: Հաշվի առնելով ներկայումս հարկային ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից կատարվող քայլերի ոչ բավարար արդյունավետությունը՝ հեղինակը կարծում է, որ հասունացել է միջազգային հարկային կազմակերպության ստեղծման պահը:

Հեղինակը, մանրամասն անդրադարձ կատարելով կիրպտոարժույթների հիմնախնդրին, նշում է, որ դրանց նկատմամբ հետաքրքրության աճի միտումը ցույց է տալիս, որ մոտ ապագայում դրանք դառնալու են պետությունների տնտեսության անբաժանելի մասը, ինչը կարող է թուլացնել կենտրոնական բանկերի և այլ մարմինների դերը համապատասխան արժույթների կարգավորման ոլորտում: Հեղինակը նաև նշում է, որ կրպտոարժույթների լայնորեն ընդունումը հնրավոր կլինի իրականացնել միայն զարգացած և ժամանակակից կանոնակարգերի դեպքում, որոնք կապահովեն անվտանգությունը կրիպտոարժույթների ոլորտում: Միջազգային մակարդակով ընդունված համապարփակ կանոնակարգերի մշակումն ու ընդունումը կարող են կանխել հանցագործությունները, որոնք կատարվել են կրիպտոարժույթների օգտագործմամբ:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ իրավաբանական լեզվով:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ և դիտողություններ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Տարակարծության տեղիք է տալիս պաշտպանության ներկայացվող 7-րդ դրույթը, որի շրջանակներում նշվում է. «Չնայած այն ընկալմանը, որ տնտեսական միությունը ենթադրում է նաև արժութային միության առկայություն, իսկ

վերջինս էլ՝ միասնական արժույթ ունենալու գաղափարը, հետազոտության արդյունքում հեղինակը հիմնավորում է ճիշտ հակառակ տեսակետը. տնտեսական միությունն ինքնին չի ենթադրում արժութային միություն, իսկ դրա շրջանակներում միասնական արժույթ ունենալը պարտադիր պայման չէ»: Մեր կարծիքով, տվյալ մտահանգումը դժվար է համարել գիտական բանավեճի առարկա, քանզի համընդհանուր մոտեցումը հենց այնպիսին է, որ տնտեսական միությունն ինքնին չի կարող ենթադրել նաև արժութային միություն, իսկ դրա շրջանակներում միասնական արժույթ ունենալը բնավ պարտադիր չէ: Դրա վկայությունն են նաև այսօր աշխարհում գործող տարբեր տնտեսական միությունների օրինակները:

2. Աշխատանքի երկրորդ գլխի շրջանակներում հեղինակն առաջ է քաշում և քննարկում նաև բնապահպանական միջամտության դոկտրինի կիրարկման անհրաժեշտության հարցը, ինչին դժվար է համաձայնել: Մասնավորապես, թեև տվյալ հիմնախնդիրը կարևոր նշամակություն ունի շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում պետությունների պարտավորության տեսանկյունից, սակայն դուրս է սույն ատենախոսության առարկայի սահմաններից և պահանջում է լրացուցիչ հետազոտություն

3. Աշխատանքի «Պետությունների ֆիսկալ ինքնիշխանությունը» վերտառությամբ 3.1. պարագրաֆում հեղինակը հիմնավորում է միջազգային հարկային կազմակերպության ստեղծման նպատակահարմարությունը: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային հարցերում պետությունները, որպես կանոն, հակված չեն զիջումների գնալու, կարծում ենք, որ աշխատանքն էապես կշահեր, եթե հեղինակն առավել մանրամասն հիմավորեր միջազգային հարկային մարմնի ստեղծման անհրաժեշտությունը, դրա հայեցակարգային կառուցակարգերը, գործունեության հիմքերն ու հիմնական ուղղությունները:

Այնուհանդերձ, ներկայացված նկատառումները չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Հետևաբար, քննարկվող ատենախոսական հետազոտությունն արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն, հետաքրքիր, ինքնուրույն ուսումնասիրություն է, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Գրիգոր Արմենի Չոբանյանի՝ «Պետությունների տնտեսական ինքնիշխանությունը միջազգային իրավունքի համատեքստում» վերտառությամբ ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.06 «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել և 2021 թվականի հուլիսի 08-ից 11-ը դրվել է գրավոր քվեարկության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը:

Արդարադատության ակադեմիայի
գիտահետազոտական և ծրագրամեթոդական
աշխատանքների կազմակերպման բաժնի
գլխավոր մասնագետ **Ա.Աբրահամյան**